



Շ Ա Բ Ա Թ Մ Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Ժող Տարի, Թիւ 38

ՇԱԲԱԹ

28 Մարտ, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Երկրորդ բաժանորդագինն է Տարեկան՝ Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դահ. : Վեցամսեայ Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դահ. : Զատի 30 փարայ : Բաժանորդագրու քիւրք քիւրք վրայ է, տարեկան բաժանորդները պիտի ստանան 50 եւ վեցամսեայները 25 քիւրք Երկրորդ : Պաշտօնական Գրասուրը յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վճարները :

Երկրորդ բաժանորդագինն է Տարեկան՝ Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դահ. : Վեցամսեայ Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դահ. : Զատի 30 փարայ : Բաժանորդագրու քիւրք քիւրք վրայ է, տարեկան բաժանորդները պիտի ստանան 50 եւ վեցամսեայները 25 քիւրք Երկրորդ : Պաշտօնական Գրասուրը յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վճարները :

ՕՐ-ՕՐ-ՕՐ

Ուսումնական Խորհուրդն ալ դեռ կը քննանայ կոր. Էն գարունն ալ կուզայ ալ ասկէջ աղէկ բան կ'ըլլայ : Թող երթայ քննանայ, ի՞նչ կուզէք մարդէն հարկաւ պէտք մ'ունի ու մեզի չըսեր կոր որ հասկընանք : Թերեւս բանի մը ատեն պիտի քննանայ ու վերջը արձնալով զիշերներն ալ գործ տեսնէ :

Եթէ այսպէս ըլլայ նէ ըսելիք չունինք, բայց կը վախնանք որ չըլլայ Թէ վերջը չիղերը բոլորովին բռնուելով անդամալոյժ ըլլայ, որովհետեւ կամաց կամաց սկսաւ անզգայ ըլլալ եւ բնաւ կենդանութեան նշան մը չցուցնել :

Մենք ալ բաւական ժամանակ քննանք, բայց գոհութիւն Ստուտտոյ արձնանք գործերնուս ձեռք գարկինք. — Ուսումնական Խորհուրդ, Թող խաթրոյ չի մնայ քեզ ալ կ'արձնենք որ երթաս դպրոցներուն վիսակը աչքէ անցունես (կ'ուզես նէ հոն ալ քննանք) մենք քեզ կրնայինք արձնանք բայց ինչ ընեմ, մարտի ամիսն է աղուոր կը քննուի այս ամիսը, անոր համար մենք ալ քեզի օր օր ըսելէ ուրիշ բան մը չենք կրնար ընել հիմակու հիմայ :

Հիմայ պիտի ըսես մեզ Թէ դուք հոգ չունիր որ եկեր էք իմ ետեւէս ինկեր էք, կամ Թէ աչքերնիդ մինակ ի՞նչ կը տեսնէ, ես գործ տեսած չունիմնէ մարդու ալ վնաս տուած չունիմ ա... խոխոս գրուլըս քաշեր աշխարհքէն վագ անցեր եմ :

Էն կեցցես, քիչ մը իրաւունք կուտամ քեզ, մարդասիրական զաղափարները սիրելուդ համար ըլլալու է որ չես ուզեր այս ինչ կառավարիչն արգիւնել որ մինչեւ իրիկուն սիկարան ձեռքը վեր վար չպտտի, ինչ պէտք է մարդուն քէֆը կ'աւրի այնպէս չէ :

Իրաւունք ունիս, բայց իմ պարտքս է ըսել, ի՞նչ ընեմ : Ես ըսեմ, դու կուզես նէ դարձեալ քննանք, գործ մի տեսներ, ու մարդուն ալ վնաս մի ըներ :

Է, գաւակս է, է, է :

Ս. Զ Ն Ո Ւ Ա. Կ Ա. Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Շատեր առանց ազնուական ցեղէ ըլլալու, կուզեն ինքզինքնին ազնուական ծախել ու այս մասին ազնուականութեան պահանջած բարոյական ցոյցերուն տեղ արդարին ցոյցերուն յարելով ինքզինքնին ազնուական կ'երազեն եւ իրաւամբ մարդոց ծիծաղը կը շարժեն :

Ասոնք այն կարգի անձինք են որք առանց սակարկելու ձի կը վարձեն, շոգեմաւի մէջ մէկը կը նստին, ճաշարանի մը հաշիւը չուզած կը վճարեն, փողոցներու մէջ մեծապանծ կը բալեն կարմիր ֆէտով եւ մափի փիւսկիւլով կը շրջին, բարեւի մասնատր ձեւ մ'ունին, շարունակ ձեռնոցնին ձեռքերնէն չեն հաներ, վերջապէս իրենց վերաբերեալ կերպ կերպ

ձեւեր ունին, ընդհանուր սովորութեանն հակառակն են:

Աստուծէ շատերն ալ նիւթական պակասութեան երբ ենթակայ ըլլան կը սկսին իրենց անցերոյն վրասկնարկներ ընել, ոմանց հայրը ամիրայ մը կ'ըլլայ, ոմանց մայրը այսինչին աղջիկը կ'ըլլայ, հարուստ, խելացի, միով բանիւ ազնուական ցեղէ ըլլալին հաստատելու համար արտաքոյ կարգի ծախուց կամ սովորութեանց ենթակայ կ'ըլլան: Խեղճերը բռնի ազնուական կոչուելու համար ալ ինչե՛ր չեն ընէր սա մեր գիտցած խել մը ազնուականաց տուները յաճախելով: Կարճ խօսքով ինչպէս է մուրացկանը հացի եւ ստակի համար ասոնք ալ նոյն են պատուոյ եւ տիպոսի համար:

Սակայն չէ, ազնուականութիւնը հարստութեան եւ սովորոյթի մէջ չէ, այլ կրթութեան մէջ է, որ կրնայ ամենաստորին ընտանիքի մը գաւակը ազնուացընել եւ նորա ազնուական դաստիարակութիւնը իւր սերնդեան յաջորդել տալ՝ եթէ այն անձն ալ կարեւոր ազնուականութեան պահանջած բարոյական հիմերը գնել իւր ընտանեաց մէջ ժամանակին ընթացիցն համեմատ:

Կարճ խօսքով ազնուական են անոնք որոնք ուսած են ազնուականութեան պարզ դասերը եւ կը ցանկան ուսուցանել իրենց եւ այլոց զաւակաց, սխալ է այն կարծիքը որ կ'ըսեն թէ ազնուականութիւնը դարեր կը յաջորդէ: Եթէ արեան մէջ կը փնտռեն այդ առանձնաշնորհութիւնը ինչո՞ւ ուրեմն ուղեղի մէջ չը փնտռեն այդ առանձնաշնորհութիւնը, քանի որ նոյն ինքն հոնկէ ծագում կ'առնեն ամէն սկզբնական գաղափարները:

Ըսել կ'ուզենք թէ խելացի եւ կրթեալ մէկը ամէն ատեն ազնուական է, ազնուական հայր կամ մայր ունենալով յիսարանոց նետուած ազնուականի մը ազնուականութիւնը ո՛ր կը մնայ:

ԱՋՍՈՏԷ

ԱՍԱՆԿ ՕՐԵՐ Է

Մարդ մը տպուշ ըլլալու է որ այս օրերուն տասնիկ օրեր ըլլալը չգիտնայ. քոչք մարդ մը, առէթա ինսաֆ-սրդ մէրձամէթսիդ, վերջապէս թէրպիլեհիդ մէկը ըլլալու է որ այս օրերուն տասնիկ օրեր ըլլալը գիտնալով հանդերձ, երթայ սակէ ոմկէ ունեցած առնելիքները պահանջէ, կ'ըսէր երկայնածափ պարսն մը, երբ խանութը նստած, պարսապահանջներուն մէկը մէկու ետեւէ գալն ու իրէ ստակ պահանջելը կը անանէր:

Այս պարսնը ոչ այնչափ շատ, այլ ըստ բաւականի պարսքեր ունէր, եւ կրնար ալ վճարել եթէ ուզէր, քոչք ամէն անգամ մէմէկ պատճառ կը փնտաէր որ ստակ պահանջելու եկողները կուս մը չվճարելով ետ կը դարձընէ:

Հիմա ալ ասանկ օրեր մըն է ձեռք ասեր, եկողին գացողին ստակի տեղ պօլ պօլ այս խօսքերը կուտայ, եւ գեռ երէկ երբ իւր մէկ պարսապահանջը իրմէ ստակ ուղելու եկաւ, մեր պարսնը բարկացաւ եւ մարդուն երեսն ի վեր պողաց ըսելով.

— Պէ ախպար, քիչ մ'ալ սալըր պէտք է, ասանկ օրեր ըլլալը չե՞ս գիտեր, ի՞նչ եկիր ստակ կուզես:

— Իչաէ ալէկ ա, ես ալ տասնիկ օրեր ըլլալուն համար է որ եկեր ստակ կ'ուզեմ, հէմ քիչ մ'ալ պօլճա ըլլալու է, իչաէ գիտես կոր ա, ասանկ օրեր է:

— Էյ գուն իրաւ սայըր ըսած բանը չունիս եզեր ա, հիմակուան տանը խօրաց բան գիտցար տասնիկ օրեր ըլլալուն համար թախըմ մը մէսարիֆ բնիկն ետքը պարսք ալ տալը: Ստիկայ քուկին էն զէնիկնոյ պիլէ չի կրնար ընել:

— Ինչ պօլ լախըրաը Աստուած սիրես, դաներ տասնիկ օրեր է տէշի հայ ալ ուտելու չէ, հէմ խօյրի ես ասանկ տղամաներ կ'լլելու ժամանակ չունիմ, տանն մը շատ առնելիքներ ունիմ չեն խտար կոր կ'ըսէիր, մաիկ կ'ընէի, ատեն մը ասունը հիւսնոյ ունիմ հէքիմի փարա տալէ դուխ առած չունիմ կ'ըսէիր մաիկ կ'ընէի, հիմա ալ մարթալով մաիկ ընելու ժամանակ չունիմ, ստակս կուզեմ:

— Ճանըմ հասկցանք, մենք ալ քու ստակը չենք խտար ըսած չունինք ա, հէլպէթ պիտի տանք լաքին սա օրերը անցնին տէ Աստուած ոպարմած է մութ լախ բան մը կ'ընենք:

— Աղլար սա օրերը անցնիլէն ետքը ես քեզի տամ, ինծի ա օրերը պէտք է, կ'ըզինք հասկցնել, սասը մեծ պահքին վերջին շարթուն եկանք գեռ ես տանա բան մը առած չեմ, ուրկէ ասնենք սրի տանք, ամենէն սառջ չօճախներուն սանկ պակազի ըլլալ մէկ մէկ խաթ լաթ կուզէ, քիչէն քիչ 300 դրուշի կ'ըլլայ, սասը պօթ ինն է, ֆէան է, քոսալաթին է եւայլն եւայլն:

— Սօլուխ առ պէ մարդ:

— Տահա կայնէ նայինք ասոնք հագնելիքի սաիր բաներ են, գանք հիմա ուտելիքներուն, քիչ մը փտատըրմա, քիչ մը պանիր, հարիւր հատ օլուսն հակիթ չե՞ս աններ:

— Տահա՞:

— Տահան ասանկ օրեր է, թէպիքի եկողներուն մէկ մէկ դրալ անուշ չե՞ս խտար:

— Էյ տահա, տահա:

— Տահա շատ, ո՞ր մէկին բեւեմ, միմակ սաճնցիով չըլլար, էփէյի ալ հաղրատա փարա ունենալու ես պէք ճիլին սախային, ժամկոչին ատեն օրհնող քահանային, ժամուն թապալսին աղքատաց նուէրն, զոր բեւեմ եւ կամ զորն խոստովանիմ:

— Պէ մարդ, խնդեցա՞ր ինչ եղար, ես այդչափ ստակով երկու հատ հարանիք կ'ընեմ,

— Չէ, չէ, տահա չխնդեցայ, ամա ասոնց մէկը պակաս ընելու ըլլամ նէ, ան ասեն կնկանս վըվուկէն խնդեցնալս բան մը ըսել չէ. ինչ է նէ ասոնք ամէնքն ալ փարայով կ'ըլլայ ազար, փարայով, տուր սա փարաս քի երթամ ինչ պիտի ընեմ նէ ընեմ :

— Ճանըմ հէլպէթ փարայով կ'ըլլայ, պէտինալայ չըլլար ա, լաքին սա կայ քի ասոնց ամէնքն ալ ինչէ առած փարայովդ պիտի ընես :

— Պէ պապամ քիչ մը քննէ քիչ մը անկէ ինչ է նէ ընել ըլլալու է իմ խելքս անոր կը հասնի :

— Անանկ է նէ երկու ասնաթէն եկու Աստուած ողորմած է բան մը կ'ընենք :

Խեղճ մարդը կ'երթայ, երկու ժամէն ստակը պիտի աշնամի յուսով, բայց մեր պարոնը միտքը կը գնէ որ ան չեկած ինքը կ'ծիկը գնէ եւ միւս օր ալ չուկայ չերթայ : Պարտապահանջը հաղիւ ժամ մը ասղին անղին թափառելէն եւ ամէն կողմէն յոյր կարելէն վերջը, կարծելով թէ անկէ ի վեր երկու ժամ եղած է, կը դառնայ կուգայ ճիշդ այն ատեն երբ մեր պարոնն ալ կը պատրաստուէր աննիլ քաշելու :

— Հա, կ'ըսէ խեղճ մարդը, ըսել է քի թամ՝ վախթին եկայ, հայտէ նայինք, իսպրի ըսելիք մը չունիս ա :

— Չեղաւ, կը պատասխանէ պարոնը, պարտապահանջին այս անակնկալ գալտեանը վրայ չուարած :

Եթէ խեղճ մարդուն զխառն գաւազանի սաստիկ հարուած մը իջնցնէին, այնչափ ցաւ չպիտի զգար, եւ այնչափ չպիտի խտովէր, որչափ եղաւ բառը զինքը խոտովեց, ալ բացաւ բերանը եւ սկսաւ պոսպ, կանչել, եւ բերնին եկածը դուրս տալ, յորմէ մեր պարոնն ալ դրդուելով ինքն ալ սկսաւ բարձրաձայն անոր ղէմ խօսիլ, առ քեզի աղուոր կոխ մը :

Ասոնց ձայնին վրայ գրացիք կը ժողվուին եւ կուզեն ասոնք հանդարտեցնել, պարտապահը կը պոսպ ասանկ օրեր է ո՛վ որի ստակ կուտայ, պարտապահանջը կ'ըսէ ասանկ օրեր է, տուր ստակս, միջնորդողները կ'ըսեն, ասանկ օրեր է, չվայելի ամօթ է, վերջապէս ամենուն ալ զխառն փաստն ու խօսքն է ասանկ օրեր է, բայց քեզ կը մնայ ընթերցող որոշել թէ ասոնցմէ որո՞ն ըսածը իրաւացի է :

Ինչ որ է, ասոնք քիչ մը ատեն այսպէս մէկզմէկու դէմ պոսպէն ճչելէն ետքը զբացեաց համոզմամբ կը հանդարտին, եւ մէկը ասոնց մէջ խաղք ու խայտառակ ըլլալուն վրայ, իսկ միւսը սրմ սրզլախ մնալուն վրայ անէճքներ կարգալով իրարմէ կը զատուի :



ԱՄՈՒՍԵԱԼՈՒԾՄԱՆ ԽՆԳԻՐԸ

1900 Ա Շ Խ Ա Ր Հ Ա Հ Ա Ն Գ Է Ս Ի Ն Մ Է Չ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆԻ Ա. ԶՈՇԸ

— Պօստուա, մասնաղէլ, ո՛ւր կ'երթաք կոր այս խըրխով :

— Պօստուա, Մաղի (Մարի) քա չե՞ս տեսներ արեւելեան ճեպընթացին կայարանը :

— Ի՞նչ իսեր է :

— Խեր է ես', հայ դիտնական եւ Ֆիլանսական հայուհեաց կողմէն ճեփխրասիօն մը կ'առակուի ի Փարի (Փարիզ) մեր պաշտպան եւ սեւեթաքիֆ Բիւզանդիոնի կողմէն. որնոր միսիօն պիտի ունենայ 1900 ի եփրօզիսիօնի մէջ ներկայացնել Տիվօրսը (ամուսնադուծում) պաշտպանող հերօներուն (դեցագնորուն) փոքունն (գաւաք) :

— Շատ լա՛ւ, միթէ այս մասին բանակցութիւն մը եղա՞ծ է :

— Ի՞նչ յառաջուց գործքերնիս կարգի դրած ենք, Բիւզանդիոն ամեն տեղ ճանչցուած է, բարեկամնիս մեզի պիտի սարսեն ա շա կաղ սը շ'եսք (Արեւելեան կայարանը) : մեզի մեծ ընդունելութիւն պիտի ընեն : Ա՛մէկու մը կապուած չենք. էրիկնիս ձգած ենք որ ուղածնին կին առնեն. Բիւզանդիոն մեզի ուղածնուս չափ էրիկ հայթայթելու փողմէն (խոստում) բրած է . . .

— Ուրախ եմ, յաջողութիւն կը մաղթեմ, իսկ Բիւզանդիոն չ'ուզեր անձամբ հոն գալ :

— Հարկաւ, բայց . . . մէկ քանի բաներ ունի աղանձե ընելու (կարգադրելու) : ինք ալ . . . վերջապէս կինը . . . այսինքն, թէ կինը իր թեւերը կապած է . . . յուսամ որ . . . վերջապէս ընդհանուր փղանսայ զինքը կ'ըսպտէ, ամէն տեղ ափփիշներ փրագաղներ (զեկոյցներ) փակցուած են, Բիւզանդիոնի նկարը ամէն տեղ դրօշմուած այնչափ բազմութեամբ տիվօրսի խնդիրը պաշտպանած ըլլալուն :

— Ուրախ եմ, յաջողութիւն կը մաղթեմ :

— Ատիէօ :

— Ատիօ :

Մեր ճարտար գաղղիագէտ հայուհին Բիւզանդիոնի յառաջընթաց կարապետը արագաքայլ հասաւ Աիրքէճի, կէս ժամ չանցած ճեպընթացը սկսց, դաները փակուեցան, անիւները սկսան թաւալիլ :

Երեք ցորեկ, եւ դիշերներ քաղցր անուրջներով անցուց. մէկէն Փեղի կեղ սը շ'եսք թու շը մօնէ սաղ (Բարիզ, Արեւելեան կայարան ամէն ոք պէտք է մեկնի) ձայնը անանջին զարկաւ, ցայտեց ամպնովանին եւ պայուսակը ի ձեռին շտապեց դուրս. խեղճը այս տառջին անգամ աշխարհի մայրաքաղաքը կ'այցիլէր, վայրկեան մը ապշեալ մնաց. ո՛չ դիմացի Պուլուար Աթրաղպուրկի շքեղ ծառուղին, ոչ աջը եւ աճեակը երկարող լայնածաւալ Պուլ. Մածէնթայի պողոտան, ոչ ալ հրապարակին անկիւնները զարդարող փափկածաշակ ճեմեղինները իւր ուշադրութիւնը գրաւեցին. անպիշ զինք դիմաւորողները կ'սպասէր : Ոստիկանք իւր արտասովոր կեցուածքէն զրգռուած սկսան զինքը չկարգապնդել. իսկ ինք յոխորտ ես, կ'ըսեր, Բիւզանդիոնի ամենամտերիմն եմ, եւ իւր պաշտպանած տիվօրսի դատին առաջին գործադրիչը, հիմա եկած եմ 1900 ի էքսպօզիտիօնի պատարաստականութիւնները տեսնելու. ո՛ւր են, ինչո՞ւ չեն երեւնար դիւ դիմաւորողները :

Ոստիկանք զիրար դիտեցին, կարծեցին թէ սիրա-

հարական զազտնիք մը կայ, բայց հայուհուն վիճակը մտաւորական հիւանդութիւն մը կ'արտայայտէր:

— Այո՛, յարեցին. իրաւունք ունիք տիկին, ճիշդ մենք ալ զձեզ կ'ուզէինք զիմաւորել, նոյն ընդ նոյն փոխադրեցին զինքը 10 երրորդ առօնօրէնսն յահականոցը: Հետեւեալ առաւօտ Շարանթօն կը տանէին անուանի խենդանոցը, վիզը տախտակ մը կախուած որուն վրայ երկաթագիր տառերով զրօշմուած էր:

Joli incurable
Première victime de Puzanthion.
Անբուժելի խելագարութիւն:

Բ Ի Ե

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ ԾԱՂԻԿ ԼՐԱԳՐՈՑ

Օրացոյցներուն մէջէն տօն օրերը պիտի վերնան:

— Քահանաներու յոգնութիւն չտալու համար բարեպաշտ ծուխերը այս Զատիկ քահանայից տունները պիտի երթան տուն օրհնէնքի:

— Իւզազինը 10 փարա սուղ դալուն համար 5 փարայի պիտի իջնէ:

— Ներկարարները եւ հնակարկատները մեծ բազմաթիւ պիտի ունենան:

— Բիւզանդիոնին մէպտէն քիչ օրէն պիտի փոխուի:

— Լեզու չունեցող մարդիկ Թաղական պիտի ընտրուին:

— Նոր լաթ հագնիլը ամօթ պիտի սեպուի:

— Իւզոտ ֆէսերը մեծ պատիւ պիտի ստանան:

— Միւր ստամոքսներուն չի յարմարելով Զատիկէն վերջն ալ Քասուլեա ուտելը պիտի չարունակուի:

— Ողորմութիւնը առաքինութիւն ըլլալով ամէն մարդ պիտի սկսի ողորմութիւն խնդրել:

— Պահքի տեղ ծոմ պիտի բռնուի:

— Զատիկն օրերը կէճէլիկով տունը նստելը մօտայի կարգ պիտի անցնի:

— Մինչեւ առաջին պսակ ծերերը պիտի երիտասարդանան կրկին ամուսնանալու համար:

— Կրօնական ժողովը այս տարի աչքը պիտի բանայ կրկնամուսնութեանց առաջին առնելու ու ազգին շահուն սրտի մտօք ծառայելու համար:

ՄԵՐ ԴԵՐԱՍԱՆԱՑ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՒ ԶՄԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ

Ասոնք ընդհանրապէս ձմեռը անպիս են, իսկ ամառը պիտի եւ երկու մաս թրաշով:

Ձմեռը զխարկով իսկ ամառը եղալը ֆէսով:

Ձմեռը պօթով կամ կօշիկով, իսկ ամառը չէնային վրայ իրենց հինցուցած չառըխով եւ սքառըխով:

Ձմեռը գրպանին հազիւ հազ մէկ մէծիտիչէով իսկ ամառը 3 ամիս խապախի կուտով:

Ձմեռը պարզապէս միւրրտ, իսկ ամառը դատարկապորտ:

Ձմեռը ձիով եւ կառքով, իսկ ամառը տապանակ ուխտի կը շրջին:

Դերասանուհեաց ընթացքը դերասանաց հակառակը կը տեսնուի:

ՄԱՆՉԷՍԹԵՐԻ ԶԱՅՈՑ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Օտարազգիներու ամէն սովորութեանց ու վարմունքներուն յարիլը նոր բան մը չէ, մեր ազգին մէջ, նոյն իսկ մեր աչքին առջեւը գտնուած են անսանկ Մկրտիչներ, Կարապետներ, Վիչէններ, Յարութիւններ, Յովհաննէսներ եւ այլն, որք մէկ վայրկեանի մէջ Պաթիսթ, Քարլօ, Վէնսան, Բասքալ, Ժան եւ այլն դարձեր են, եւ լեզունին ալ նէթմիչ իբի պուչուգ միլլէթին համազգային բառարանէն քաղուած մըն է:

Մենք կը կարծէինք թէ այս վատ ու անտեղի սովորութիւնը, որ աւելի ակտ մ'է եղած, երթալով կ'անհետանայ, մինչդեռ ընդհակառակն կը տեսնենք թէ այդ գէշ սովորութիւնը տարածուելու վրայ է, Յակոբ կամ Մկրտիչ Պրթի, եւն փոխելէն առանց գոհ ըլլալու, հայերէն լեզունին ալ անզգիականով դարդարելու կամ նորոգելու ելած են, որոց իբր մէկ օրինակը յատա՞ջ բերել հարկ կը սեպենք, Մանչէսթերցի մէկ քանի Հայոց մէջ տեղի ունեցած հետեւեալ խօսակցութեան առթիւ:

— Բարի լոյս միտքը ձըրթ, շատ ատեն կայ որ ձեզի տեսած չունինք, ի՞նչ է պատճառը, Մանչէսթեր չէիք, ինչո՞ւ միս Թըր... Ետնին տունը չէք իգար կոր գիշերները:

— Քանի որ գիշերները հոն չեմ երթար կոր, գիտես թէ քէսէիս մէջ պէրէքէթ մտաւ, եղբայր, ինչ էր ան մինչեւ առաւօտ նստէ վրայ ալ փարա տուր, յուսալով որ օր մը կը վաստիկս:

— Է, հիմա ինչպէս կ'անցունես գիշերները:

— Ատենին թիս (թէյ) կ'առնեմ, քիչ մը ժուռնալ կը կարդամ, առաւօտուն կանուխ պրէքֆասըս (նայտճաշիկ) կ'առնեմ, խելքս գլուխս վերհավուղ (մազազան) կ'երթամ գործիս կը նայիմ:

— Հին տունը կը լնակիք թէ նոր լոծինք (բնակարան) գացած էք:

— Ամիսէն աւելի է որ լոծինկս փոխեցի եւ հիմայ Լոնկասոյիտի կողմը Սթէնոր Թէրէս Ա՛յ հալուղ կը բնակիմ:

— Գոնէ տանդ մէջ ժամանակ կ'անցունես կոր:

— Վէլ (լաւ) տան մէջ բան մը չի կայ, բայց տան միւրսը (տիկին) անթի (մօրաքոյր) մը ունի, ան ալ երեք օրիորդ ունի, բաւական աղուոր են եւ ամէն մէկը 12

հազարական լիրա ունին, ասոնք չարաթը մէկ քանի անգամ մեր տունը կուգան, եթէ ուզած երիտասարդին ըլլայ պիտի առնեն, բաւական դրամօժիտ պիտի տան, գիշեր ցերեկ կ'աշխատիմ այս գործին:

— Շատ ղիւրահաւան էք, ինչ որ լսէք կը հաւատար:

— Չէ եղբայր, ապահով եմ, բոլոր ունեցածներն ալ աղէկ գիտեմ, կարծեմ այս մասին կասկած ունիք:

— Չէ թէ միայն կը կասկածիմ, այլ ըսածիս վրայ ապահով եմ, այն սկզբունքով որ եթէ Անգլիացի օրիորդ մը հարուստ ըլլայ մեր երեսը բնաւ չի նայիր, եւ եթէ օրիորդը խաբուի, ազգականները չեն թողուր:

— Ինչու ատանկ կ'ըսէք եւ կը պնդէք:

— Որովհետեւ իմ ըսածիս շատ օրինակները տեսնուած է, եւ կրնամ ըսել որ ընդհանուր. մէկ կամ երկու էքսէրչընէ (բացատուութիւն) զատ, եւ վարմանակն ո՛ւր է գիտէք, անանկ նուրբ եւ վարպետութեամբ կ'ընեն որ անպատճառ կը խաբուի Ահա տէ՛ր ի՞նչ թի՛քուէ՛ջն:

— Քրիստմասին (ծնունդ) խոստացած էք տեղ մը երթալու:

— Էնկէ՛ճ (խոստացած) չեմ, ինչո՞ւ կը հարցունէք:

— Ինչ որ վերայիշեալ օրիորդները իրենց մօրը հետ Քրիստմասին օրը տիները (ճաշը) մեր տունը պիտի ընեն, եթէ դուք ալ բարեհաճիք այն տեղ գտնուելու աւելի աղէկ կը քննէք եւ կրնաք իմանալ որի հետ պիտի ամուսնանան:

— Իմ գործս չէ, ես անհամբեր մարդ մընեմ, նախ ձեր տանը միւսըսին, ետքը անոր անթիին եւ օրիորդներուն էնթրօտիւ (ներկայանալ) կուզէ, խել մը երկան բարակ բաներ:

— Նեղութիւն ըսածնիդ երկու մինիւթ չի տեսեր, եւ գիտցած եղէք որ շատ մարգասէր են, եւ գո՛հ կ'ըլլաք զանանք տեսնալնուդ:

— Ուրեմն կը խոստանամ դալ Քրիստմասին ձեր տունը ի միասին տիները առնելու:

Աստուած շատ քաշել չի տայ մեր երիտասարդներուն, այս կերպ խօսակցութիւն մը լսողը անպատճառ պիտի ըսէ թէ ասոնք ալ Հայոց Պօհեմիկներն ըլլալու են:

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Մուրթիւնք եթէ տգիտութեաւ գլուխ գործոց չեն ի՞նչ են:

— Աղքատը հարուստին եւ հարուստը աղքատին եթէ կնքահայր չեն ի՞նչ են:

— Սուտը եթէ ճշմարտին զարդը չէ ի՞նչ է:

— Բանականութիւնը անասնոց դատապարտութիւնը չէ որո՞ւնն է:

— Լոյսը թէ որ կոյրին համար նշանակութիւն չունի որո՞ւ համար ունի:

— Եթէ ջուրը դէպ ի բարձրութիւններէ վեր չի քալեր, ինչո՞ւ համար երբեմն պատէն վեր կ'ենէ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ 15/27 թուով, արտաքին գործոց պաշտօնարանէն հրահանգ գրկուած է Օսմ. դեսպաններուն եւ ներկայացուցիչներուն, որպէս զի Պոլիս գառնալ խընդրող հայ գաղթականներուն ըստ օրինի անցագիր արուի, կամ անոնց արդէն ունեցած անցագրերը վիզէ ըլլան, ամէն դիւրութիւն ընծայուելով պարկեշտ հպատակներու վերադարձին իրենց հայրենի երկիրը: Այս նորանոր թոյլտուութիւնք անչուշտ շնորհակալութեամբ պիտի լսուին տակաւին գառնալ փախաքող գաղթականներուն կողմէ, որոց վիճակը նկարագրուած է արդէն:

— Նոյն մտօք հրահանգներ ալ կը զրկուին Բ. Բրան կողմէ ատանձնաշնորհեալ կուսակալութիւններուն ի պարտու պատշաճ գործադրութիւն:

— Ազգ. Հիւանդանոցի վարչական Յանձնաժողովը պաշտօնագիր մը ուղղելով Ս. Պատրիարք Հօր, պատրաստելոց շատութեան համեմատ հացի եւ մսի քանակութեան անբաւականութիւնը մատնանիչ կ'ընէ, եւ զայն աւելցնելու համար պէտք եղած դիմումներն ընել կը խնդրէ Ն. Սրբազնութեանէն:

— Հիւանդանոցի վարչական Յանձնաժողովոյ չորեքշաբթի օրուան նստին մէջ հետեւեալ որոշումները տրուեցան. — 1. Բուժէլիի երկաթուղեաց Ընկերութեան Ետի-Գուէլի գործարանին մէջ ամէն տարի Հիւանդանոցի Որբանոցէն հնգական աղաք ընդունուելու եւ մեքենական ուսմանց եւ արհեստից վարժուելու համար նոյն ընկերութեան Տնօրէնութեան նամակ գրուեցաւ եւ խընդրուեցաւ: 2. Չամազան նուիրատուութեանց, ծաղկեպղտակի, Հիւանդանոցի դրան մուտքի, Ս. Մննդեան եւ Ս. Չատիկի այցելութեանց նուէրի համար տարբեր քանակութեամբ եւ գոյնզգոյն ստացադրեր տպել եւ զանոնք նոր կնիքով մը կնքել որոշեց, որպէս զի ֆօնդրօշն աւելի կանոնաօր ըլլայ եւ սխալմանց տեղի չտրուի: 3. Այսուհետեւ Հիւանդանոցի համար պէտք տեսնուած փայտի ու ածուխի, դեղօրէից, հանպերձեղինաց եւ պարկնից մի մասը նոյնպէս արհեստարանոց եւ դիւանատանց պիտոյից համար պէտք եղածները, նուազուրով պիտի գնուին: 4. Գթութեան Քորը անուամբ հիւանդապահներ ընդունիլ ի Հիւանդանոց եւ վարժեցնել. առ այժմ 12 ուխտեալի համար ընտրութիւն պիտի ըլլայ:

Գաւառային Միացեալ աղքատիկ վարժարանաց Խընամակալութիւնն Ապրանեան Ստեփան փաշայի ատենապետութեամբ նիստ ըրաւ ԴՇ. առաօտեան ժամը 4 ին իր գրասենեկին մէջ, եւ երկու ժամու չափ զբաղեցաւ զպրոցական կարգ մը խնդիրներով որք իր սեղանին վրայ դիզուած էին: Խնամակալութիւնն ի մէջ այլոց մէկ քանի վարժարաններու վերաբացումն ալ սնորհեց Պատրիարքական յատուկ յանձնարարութեամբ, եւ օժանդակութեամբ ազգ. հաստատութեան մը, եւ որոշեց միանգամայն որ Մշոյ նախկին Միացեալ վարժարանաց դիրքերն ու գոյգերն՝ 3500 կտորէ աւելի՝ Խնամակալութեան կողմէ նուէր արուին քաղաքին ազգային վարժարաննեւ:

րուն : Այս դրութիւնը նախկին Միաց. Ընկերութեանց օրով ալ գործադրուած է միշտ այն ամէն տեղ , ուր վարժարան փակելու տխուր հարկին նեղքեւ գտնուած է այդ մարմին . եւ դեռ վերջերս էր որ Քղիի Միաց. նախկին վարժարանաց գրքերն ու գոյքերն 2800 կտորէ աւելի՝ նուէր տրուեցան Քղեցոց : Յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Չատկէն վերջը :

— Ուրախութեամբ կիմացունենք թէ Պարսից Վեհ. Ծանն Ասիւժ եւ Արեգական պատուանշանի Դ. աստիճանը շնորհած է Սապահ լրագրոց աշխատակից Ալիքոսն էֆ. Գօճապըրըզեանի . — Մեր ինդակցութիւնները կը յայտնենք մեր յարգոյ պաշտօնակցին :

— Պ. Ծանշեանց կարօտելոց իճպատ իր ըրած հրատարակութեան հասոյթէն հինգ հազար Փրանք եւս զրկեց Ս. Պատրիարքին :

— Մուշի, Վանի, Ս. Պատարայ, Բաղէշի եւ այլ տեղերու կարօտելոց բաշխուելու համար , Ս. Չատկի աստիճանի նպաստի դրամներ զրկուեցան Ս. Պատրիարք Հայրն հեռագրու ծանոյց թեմականներուն նպաստից ճամբայ հանուած ըլլալը :

— Ուսումն . Պորճրոց անդամք անցեալ ԳԾ . Որբանոցը . Կեդր. վառժարանն եւ Թազ. վարժարաններն այցելելով ընտրեցին այն 25 ուսանողներն որք Պետական վարժարանաց մէջ պիտի ընդունուին : Ուսումն . Պորճրոցն այսօր այդ ուսանողաց ցանկը վերջնապէս պատրաստելով պիտի մատուցանէ Քաղաքական փոքրվին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մերակոյան այսօր դճնիակ նիստ քրաւ : Նախագահ Մաքինի խրաքանչիւր կուսակցութենէ երկուքական հոգի կանչեց Սպիտակ Պալատը , կացութեան վրայ խորհրդակցելու :

— Լրողիրք կ'ըսեն թէ Մաքինիի պատգամագիրն այնքան ծանր ամբաստանութիւն մը պիտի ընէ Սպտակիոյ դէմ , որ անկարելի կը կարծուի զիւանայիտական յարաբերութեանց չարունակութիւնը : Զօր . Ուտֆորտի ետկ անչուին հաւանականարար տեղի պիտի ունենայ պատգամագրին Պորճրոցարանին մատուցուելուն հետ մէկտեղ :

— Անդիոյ , Գերմանիոյ , Իտալիոյ եւ Յրանսայի միջամտութեան վրայ , Սր . Մաքինի անպայման ժամանակաւ յետաձգեց իր պատգամագիրն առ Մերակոյան եւ Երեսփոխանական փոքրին Միացեալ Նահանգաց :

— Մտորտի Ամերիկեան ղեկավանն հրաման ատուցած է մեկնելու :

— Նիւ Եօքը Հէրլոտ կ'ըսէ թէ Միացեալ Նահանգաց Նախարարաց Պորճրոց նիստէ մը ետք նախարար մը յայտարարած է թէ Մ . Նահանգները պիտի չընդունին ո եւէ միջնորդութիւն եթէ Քուպայի անկախութիւն չսպասուի :

— Սր . Մաքինիի ասողութիւնը քանի մը օրէ ի

վեր խանգարուած է , մտային ծանր յոգնութիւններու եւ Սպանիոյ հետ կատարուած ծանրակշիռ բանակցութեանց հետեւանքով որոց անցաձող արգիւնքը սրանեղութիւն կը պատճառէ իրեն : Սպանիոյ պատասխանին վրայ՝ Միացեալ Նահանգաց Մերակոյտին ու Երես . Ժողովին ուղղելի պատգամագրոյն սեւագրութիւնն երեք անգամ պատուեց : Բժիշկն յանձնարարեց կարելի եղածին չափ հանգիստ ընել :

— Այն բարձրաստիճան պաշտօնաւարն որ իմաց առաւ Չինու կայսեր թէ արտաքին գործոց խորհուրդը 10 միլիոն դաշէ կաշառք կերած է Ռուսիայէ , քննութիւն պահանջեց , ըսելով որ եթէ Լի-Հունկ-Չանկ անմեղ է ինք զլխատուի , իսկ հակառակ պարագային Լի-Հունկ-Չանկի գլուխը կտրուի :

— Չինու կայսրն հարցուցեր է Լի-Հունկ-Չանկ Փոխարքային թէ ինչ հաւանականութիւն կայ որ Անգլիա եւ Ճարնն Չինու օգնութեան զան երբ Չին զիմացրէ Ռուսիոյ պահանջումներուն : Լի-Հունկ-Չանկ պատասխաներ է թէ « Անգլիա եւ Ճարնն արդէն իրենց մէջ համաձայնած չեն , մինչեւ ցայսօր դաշնակցութիւն մը չունին , ի՞նչպէս կրնան մեր օգնութեան հասնիլ : Անգլիա խորշակով կը խորշի պատերազմէ : Ուրիշ ճար չկայ Չինու բայց եթէ հաւանիլ Ռուսիոյ պահանջումներուն , որք հիմա նուազ ծանր են քան երբ պատերազմ մ'ըլլայ եւ Չինու զօրքն յաղթուի , եւ յաղթուին ալ անխուսափելի է , քանի որ Ռուսիոյ հետ դաշնակցած են Տրանսա եւ գերմանիա , ճնշում ի գործ դնելու համար Չինու վրայ » : — Կայսրը լռութեամբ մտիկ ըրեր է Վր լեզուանի փոխարքային խօսքերուն , եւ ի վերջոյ , աչքերէն արցունք վաղելով , համակերպեր է Բորդ Արթուրի եւ Դայիէնուանի « վարձու տրուելուն » : Բայց չկարծուի թէ Չինու գոնողութիւնն հոս վերջացած ըլլայ : Որոշուած է որ Ռուսիոյ « վարձու պիտի տրուի » նաեւ ո՛ր եւ է նաւահանգիստ գոր Ռուսիա յարմար տեսնէ՝ Մանչուրիոյ-Սիպերիոյ երկաթուղւոյն ճիւղ մը բանալու համար : Ռուսական « վարձակալութիւնն » այնքան շինծու խօսք է որ ըստ պայմանագրութեան Ռուսիա իրաւունք ձեռք բերած է նորանոր մնայուն բերդերով եւ ամրութիւններով անառիկ վիճակի մը մէջ գնելու իրեն թողուած նաւահանգիստները :

— Եւրոճոմայէ կը հետազրուի թէ Ճարննի դահլիճը որոշեր է ներկայ տագնապի միջոցին գործօն ընթացք մը չընել եւ սպասողական քաղաքականութեան մը հետեւիլ :

— Պիրմիկէմի զինագործարանը քանի չսպաթէ ի վեր գիշեր ու զօրեկ կ'աշխատին եւ յաւելուածական գործաւորներ ալ կը բանեցնեն՝ Անգլիոյ , Սպանիոյ եւ Միացեալ Նահանգաց կառավարութեանց աւրագրած նաւային եւ ցամաքային ոււմերն , հրացանի փամփուշաներն , հրացաններն ու ըէփօլվրներն հասցնելու : Այս աստիճանի չէնքեր կցուեցան նոյն գործարաններուն :


— Անգլ . կառավարութիւնը Չինու հաճութիւնն ատած է Ուէյ Հայ Ուէյի նաւահանգիստը վարձելու , որ հիմայ Ճարննի զօրաց ձեռքն է իբրեւ գրուական պատերազմական տուգանքին մնացորդին , 16,000,000 ոսկւոյ կը

հասնի եւ պիտի վճարուի Մայիս 1 ինչ Կրտսի թէ ճարտնական կառավարութիւնը հաւանած է որ Ուէյ Հայ Ուէյ վարձու արուի Անգլիոյ, վասնզի Գորէայի Ռուս պաշտօնեաներուն մեկնամբ ճարտն ազատ թողուած է իր ազգեցութիւնն ընդարձակել այդ երկրին վրայ: Ուէյ Հայ Ուէյ կը գտնուի Շանկիթուկ թերակղզւոյն վրայ Փիչիլի ծովածոցին մուտքին հարաւակողմն, Փորթ Արթուրէ իբր 180 հազարամէթր զէպ հարաւ, եւ իբր 200 հազարամէթր հեռու Քիսո Չօի Գերմանական նաւային կայանէն:

ՆՈՐ ԱՅՐԲԵՆՍՈՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶՍՐԳ . —

Իզվիբի Մամուրեան սպարանէն հրատարակուած սոյն Քերակաւը մէքոսով պատրաստուած գործ մը է, եւ լաւագոյնը նմանօրինակ հրատարակութեանց մէջ:

Գին 20 փարա:



ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ազգային եւ օտար վարժարաններու մէջ դաստիարակող ինչպէս նաեւ առեւտրական հրատարակին վրայ երկարատեւ փորձառութիւն ունեցող պատճառար անձ մը, Անգլիերէն եւ Գաղղիերէն թիղթակցութեանց եւ Տոմարակալութեան գործնական գասեր տալու պատրաստ է: Գինը խմբադրատունս:

ՉԷՕՐԷՔ

ՄԻ ՄՈՌՆԱՔ ԱՂՔԱՏՆԵՐԸ

Չառկական չէօրէք՝ ամենալաւ եւ ամենաբնօրինակ պատրաստուած՝ ի նպատակ Սրբոյն Յակոբայ Ազգ. Անկեղանոցի՝ պիտի վաճառուի մէկ օխոս 11 դրոշ՝ Կեասարայի Բարսեւակ էֆ. Պայրքճևանի կողմանէ:

Գնողք համով, հոտով չէօրէք գնած ըլլալէ զատ, Ս. Չառկի օտթիւ օլ, բարեգործութիւն մը ըրած պիտի ըլլան Անկեղանոցի հարիւրաւոր պատասպարիւրոյ:

Վաճառման տեղերն են, Բերա Մեծ֊փողոց Մաննի դեղարանին գիմացը թիւ 89 Միխայէլ էֆ. Սիմօնիտիսի խանութը, նոյն փողոց Գաղիտացոյ Հիւանդանոցի դիմաց թիւ 45 Պ. Մարովի սրճարանը, նոյն փողոց թիւ 88 լէրուքէր ձիվան աղայի խանութը, եւ Բանկայթի Սր. Յակոբայ Անկեղանոցի կից խանութը:

Սր. Յակոբայ Անկեղանոցի պանտրոջները չկրող չէօրէքներէն նոյն յարկին նպաստ չկայ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԵԱՆ ԳՐԱՏԱՆ
Սուրբան Համալս նստեալի թիւ 14, Գ. Պոլիս

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԵՆԷ - ՀԱՅԵՐԵՆ

Գին 22 Ղրշ.

Սոյն Ֆրանսահայ բառարանը յօրինուած հետեւողութեամբ Լիբրէի արեգիտական բառարանին, կը պարունակէ Ֆրանսերէն լեզուին գրիթէ բոլոր բառերն իրենց բոլոր ստուգանքով, որպէս եւ ամենէն գործածական ոճերն: Տէմիրճիպաշեան էֆէնտի բառաշինութեան մասին իւր ունեցած մասնաւոր յարժարութեամբն որով բազմաթիւ բառերով ճոխացուցած է հայ լեզուն, գտած է լեզուին պակասած դրական, դեղեցկագիտական, իմաստասիրական, գիտական եւ արհեստական բառերուն հայերէններն, այնպէս որ կատարեալ բառապիրք մը կրնայ համարուիլ Բառարանս ունեցած այս երբեակ ստաւելութեամբք, այսինքն առաւելութիւն Ֆրանսերէն բառից, առաւելութիւն նոր ամանց, առաւելութիւն 15—20,000 նորակերտ հայերէն բառից:

Սյս բոլոր ստաւելութեամբք Ֆրանսահայ Բառարանս. որ կը պարունակէ իբր 1000 երես, կազմեալ կը ծախուի անօրինակ գնով:

ՀՈՆԿ - ԳՈՆԿ - ՍԷՅԱՆ - Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ

ձեռայ պէյ խանի դրան կից թիւ 10
Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի Կ.



Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառաց ապագրանքները վաւթով եւ ինամով կը գործադրուին: Չինական, Հնդկի, Ճափայի եւ Աէյլանի ընտրելագոյն թէյք, ուղղակի բերուած հաս: Թէյի նոր հունձքն սկսած է գալ: Չգուշացէք սոյն վաճառանիչին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ ստորագրութիւնը:

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԳԻՄ ԱՌ ԳԻՄ

Յանկարծ դուռը զարնուեցաւ եւ երասիմօ իր ճառն ընդհատել պարտաւորեցաւ, անմիջապէս Պետիկ գուռը վազեց, կարծելով որ ասան միւս վարձակալներէն մին սխալմամբ կը զարնէր իր դուռը:

Բայց երբ դուռը բացաւ արձանի նման քարացած մնաց, Սուչօ կիրգա էր որ եկած էր իր կարծեցեալ որդւոյն կեանքին հաշիւը պահանջել: Գուլա եւս անոր ետեւը կեցած, օտքին մասններուն վրայ կը կոխեր որ Սուչօ կիրգա կոնակէն ներսն անցած գառցածը դիտէ:

Իսկ Սուչօ կիրգա ասանց վայրկեան մ' իսկ վարանելու դուռն հրեց եւ ներս մտնալով դէպ ի սենեակին յատաճանալ սկսաւ, Պետիկ որ ապուշ կրթուած էր, քիչ վերջն սթափելով ներս վազեց, որով Գուլա եւս միջոց գտնելով ներս սպրդեցաւ եւ գնաց սենեակին դրան քով տեղաւորուեցաւ:

Երբ Սուչօ կիրգա սենեակէն ներս մտաւ, Տրմիթրօ տեսնելով զրպանէն վեցնարուածեան մը հանեց եւ անոր վրայ ուղղեց փողը, գոչելով:

— Ո՛հ, վա՛տ, ալ հիմա ձեռքէս ազատում չունիս:

— Եթէ քայլ մ'եւս առնես կամ հրազենդ պարպես, գոչեց Տրմիթրօ ակնթարդի մէջ վեցնարուածեանն հանելով եւ Պետիկի վրայ ուղղելով անոր փողը:

Սուչօ կիրգա հասկնալով որ սխալ քայլ առած էր, չրթուեց խածնելով վարանիլ սկսաւ եւ իր վեցնարուածեանին փողը խոնարհեցուց:

— Ո՛հ, ըսաւ, գէթ զաւակս ինձ թողուիր, անգո՛ւթ, ի՞նչ ըրած եմ քեզ որ զիս այսչափ կը հալածես:

— Նրկար քարոզ պէտք չէ, ինձի հետ հաշիւդ կարգադրելէ բոլորին յոյսդ կտրէ, ապա թէ ոչ զաւակդ կորսուած է, այն վայրկեանին որ ինձմէ վրէժ լուծելու համար ձեռնարկ մը ընես, զինքը կըսպաննես ստանց ուրիշ ոչինչ մտածելու: Կիմա ասանց այլ եւս վայրկեան մը սպասելու մեկնելու ես աստի:

Թէպէտ ուզեց խօսիլ, բայց խոչափողը, տարապայման չորցած էր եւ խօսքերը մինչեւ չրթուեցներն իսկ չէին ելներ, շուարեցաւ, վարանեցաւ, քանի մը բառ հազիւ կրցաւ մրթմրթալ եւ վերջապէս քաջ ըմբռնելով որ չպիտի կրնայ յաջողիլ իր ձեռնարկին մէջ՝ անշուղի դուրս ելաւ:

Գուլա իրմէ առաջ վար իջնելով, փողոցին դուռն իրեն կապասէր:

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԳ

ԳԼՈՒԽ Ա.

ԽՈՐՀՐԳԱԿՅՈՒԹԻՒՆ

Սուչօ կիրգաի այնպէս գլխիկոր եւ յուսահատ Պետիկի տունէն մեկնած օրուան իրիկունը մեզ արդէն ծանօթ ենիմահալլէի Զրօսարանին մէջ Պ. Օհան նստած թէ երբեմնակի իր առջեւ գրուած օղիի սրուակէն մէկ մէկ գաւաթ կը կոնծէր եւ թէ իր դէմը կեցող Աղջիկ Յովսէին հետ կը շաղակրատէր:

Այսու հանգիստ մտանգութեան կիսիւն իր ճակատին վրայ ակն յայտնի գրոշմուած էր, խոր մտայլ մը պատած էր իւր դէմքը եւ երբ ասան ասան հարկ կ'ըլլար Յովսէի ճոռոմարանութեանց եւ ծաղրարանութեանց հանդէպ ծիծաղիլ, իւր արձակած ծիծաղն ակներեւ կերպիւ կեղծ ըլլալն լաւ դիտողի մը աչքէն չպիտի լրիպէր: Պարոն Ահարոն միշտ իր ժամացոյցը կը գիտէր եւ գոգչես վայելիանները կը հաշուէր: Յանկարծ նոր գազափար մ'երկնելով, հարցուց Յովսէի:

— Յովսէ՛ . . .

— Հրամայեցէ՛ք, տէ՛ր իմ:

— Անցեալ գիշեր ի՞նչեր է եղեր հոս, երկու շառլաններ կան եղեր, մինչեւ լոյս նուազածութիւն եւ հրախաղութիւն սեզի ունեցեր է:

— Այո՛, ազնուափայլ տէ՛ր, հոս գտնուելու էիք, կը ցաւիմ որ բացակայ էիք, ամբողջ այս պատշգամբ լոյսերով ողողուած էր, եւ իրիցք ալ ինչ ազնիւ անձեր, ազնուական մարդիկ ըլլալնին վրանուն կը վազէր, մանաւանդ այն զեղին մազերով կրիտասարդը, որչա՛փ ազնուարարոյ տղայ, խաչոր ինչ ուղէ կուտամ այրպիտի վեհանձն մէկուն, եւ ինքն ալ ի՞նչ գեղեցիկ, փափուկ, աչխոյժ եւ կորովի էր, ա՛խ հոս ըլլալու էիք որ տեսնէիք, վսեմաշուք տէ՛ր:

— Է՛յ մինակ այդ երիտասարդին խօսքը կ'ընես, հետինը ո՞վ էր, անոր խօսքն ամենեւին չես ըներ:

— Ո՛հ, այն ալ մեծափարթամ եւ ազնուաշուք անձնաւորութիւն մ'է բայց միւսին գործն ուրիշ էր, առաջին տեսնալուս կարծես հին բարեկամ մ'էր արդէն որ վերտոնին գտած էի այնչափ սիրեցի:

— Ո՞վ էին որ այդչափ բերնիս ջուրերը կը վազցընես, ծանօթ մարդիկ չէի՞ն միթէ՛:

— Մէկը ծանօթ էր, մեր ազնուազարմ միւսիւ Պետիկն էր, զոր անշուշտ կը ճանչնաք:

Շարունակելի

Արտօնատէր Ա. ՍՍՔՍԵՆՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՅՐԸՆԸՆ
(Նախկին ՊԱՂՏԱՏԼԵԱՆ Ծպարան)
Կ. Պոլս. Մալքում Համամ 14.